# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 86 - Ա
27 մարտի 2015 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով 1988 -1997 թվականներին ծնված զորակոչի ենթակա քաղաքացիների բժշկական ստուգումն ու զորակոչը կազմակերպված անցկացնելու նպատակով

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքային զինվորական կոմիսարներին՝

1) սկսել և օրենսդրությամբ սահմանված ժամկետում ավարտել զորակոչի ենթակա 1988 – 1997 թվականներին ծնված, ինչպես նաև տարկետման իրավունքը կորցրած երիտասարդներ զորակոչը.

2) յուրաքանչյուր շաբաթվա երկուշաբթի օրը զեկուցել մարզպետին զորակոչի ընթացքի մասին.

3) զորակոչիկների առողջական վիճակը ստուգող հանձնաժողովի անդրանիկ նիստում հանձնաժողովում ընդգրկված բժիշկներից ընտրել ավագ բժիշկ.

4) կազմակերպել զորակոչիկների տեղափոխումը հանրապետական հավաքակայան:

2. Հաստատել տեղական զորակոչային, զորակոչիկների բժշկական ստուգում անցկացնող, զորակոչիկների ընտանեկան, գույքային և նյութական պայմանները ստուգող հանձնաժողովների կազմերը՝ համաձայն հավելված 1-ի, հավելված 2-ի և հավելված 3-ի:

3. Հանձնաժողովներին՝

1) կազմակերպել զորակոչիկների բժշկական քննությունը.

2) նախապատրաստել և մարզային զորակոչային հանձնաժողովի հաստատմանը ներկայացնել զորակոչիկներին ընտանեկան դրության պատճառով և ուսումը շարունակելու համար տարկետում տալու հիմնավորող փաստաթղթերը.

3) նախապատրաստել և մարզային զորակոչային հանձնաժողովի հաստատմանը ներկայացնել պահեստազոր տեղափոխվող քաղաքացիների փաստաթղթերը.

4) քննարկել ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու վերաբերյալ դիմումները:

4. Մարզի համայնքների ղեկավարներին, հիմնարկ ձեռնարկությունների և ուսումնական հաստատությունների տնօրեններին՝

1) զինվորական կոմիսարիատների ծանուցագրերի համաձայն զորակոչի ենթակա քաղաքացիներին ներկայացնել զորակոչային տեղամաս՝ ապահովելով նրանց բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով.

2) զինվորական կոմիսարիատի պահանջով տրամադրել անհրաժեշտ տեղեկությունները զորակոչիկի վերաբերյալ:

5. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ Ա. Պողոսյանին՝

1) բժշկական հանձնաժողովներին ապահովել անհրաժեշտ հատուկ բժշկական սարքավորումներով, ձեռնարկել միջոցառումներ բոլոր տեսակի բժշկական հետազոտությունները տեղում կազմակերպելու համար /ֆլյուորոգրաֆիա, ՄՌՏ/.

2) սույն որոշմամբ հաստատված բժշկական հանձնաժողովներում ընդգրկված բժիշկների ցուցակները ներկայացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

6. Մարզի տարածքի հիվանդանոցների և պոլիկլինիկաների տնօրեններին՝

1) ապահովել հանձնաժողովներում ընդգրկված բժիշկների պարտադիր մասնակցությունը զորակոչիկների բժշկական ստուգումներին.

2) ընդունել ի գիտություն, որ զորակոչային և բժշկական հանձնաժողովների անդամները զորակոչի ու բժշկական ստուգումների օրերին ազատվում են աշխատանքից՝ աշխատանքի վայրում պահպանվում է նրանց աշխատավարձը:

7. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչությանը /պետ Ա. Ադամյան/՝

1) ապահովել հասարակական կարգը զորակոչային տեղամասերում.

2) զորակոչային հանձնաժողովներին չներկայացող և զորակոչից խուսափող անձանց նկատմամբ կազմակերպել որոնման և բերման միջոցառումներ.

3) կազմակերպել բացատրական աշխատանքներ զորակոչից խուսափող քաղաքացիների բնակության, աշխատանքի և ուսման վայրերում:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանին:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2015թ. ճարտի 27-ի
N 86-Ձև որոշման

## ՏԵՂԱԿԱՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ

**ԳԱՎԱՌ**

| | |
|---|---|
| Վ. Գոզեյան | Գավառի զինվորական կոմիսարի ժամանակավոր պաշտոնակատար, հանձնաժողովի նախագահ |
| Հ. Համբարձումյան | Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի վարիչ |
| Ռ. Չիբուխչյան | ՀՀ ոստիկանության Գավառի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ |
| ------------ | Ավագ բժիշկ |

**ՍԵՎԱՆ**

| | |
|---|---|
| Տ. Աթայան | Սևանի տարածքի զինկոմ, հանձնաժողովի նախագահ |
| Հ. Սահակյան | Փոխքաղաքապետ |
| Ղ. Դավթյան | ՀՀ Ոստիկանության Սևանի բաժնի պրոֆիլակտիկայի բաժանմունքի պետ |
| ----------------- | Ավագ բժիշկ |

**ՄԱՐՏՈՒՆԻ**

| | |
|---|---|
| Գ. Մխեյան | Մարտունու տարածքի զինկոմ, հանձնաժողովի նախագահ |
| Ն. Ղազարյան | Մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ |
| Մ. Պողոսյան | ՀՀ ոստիկանության Մարտունու բաժնի պետի ծառայության գծով տեղակալ |
| ------------- | Ավագ բժիշկ |

**ՎԱՐԴԵՆԻՍ**

| | |
|---|---|
| Գ. Առաքելյան | Վարդենիսի տարածքի զինկոմ, հանձնաժողովի նախագահ |
| Ա. Հարությունյան | Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության գլխավոր մասնագետ |
| Կ. Քոչարյան | ՀՀ ոստիկանության Վարդենիսի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ |
| ------------- | Ավագ բժիշկ |

**ՃԱՄԲԱՐԱԿ**

| | |
|---|---|
| Ա. Ապրեսյան | Ճամբարակի տարածքի զինկոմ, հանձնաժողովի նախագահ |
| Հ. Մխիթարյան | ՀՀ ոստիկանության Ճամբարակի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ |
| Ռ. Հովհաննիսյան | Ճամբարակի ՍԾՏԳ – ի պետ |
| -------------- | Ավագ բժիշկ |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2015թ. մարտի 27 - ի
N 86 - Ա որոշման

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ

**ԳԱՎԱՌԻ ՏԱՐԱԾՔ**

| | | |
|---|---|---|
| 2. | Կարինե Սինանյան | ակնաբույժ |
| 3. | Լաուրա Մնացականյան | նյարդաբան |
| 4. | Համեստ Հայրապետյան | հոգեբույժ |
| 5. | Անահիտ Կարապետյան | քիթ-կոկորդ-ականջ |
| 6. | Գայանե Ղուլոյան | սրտաբան |
| 7. | Արկադի Մինասյան | մաշկավեներոլոգ |
| 8. | Սեդա Բոտոյան | թերապևտ |
| 9. | Արմեն Աղաջանյան | վիրաբույժ |
| 10. | Զոյա Ղարիբյան | բուժքույր |
| 11. | Վիլետա Մարտոյան | քարտուղար |

**ՄԱՐՏՈՒՆՈՒ ՏԱՐԱԾՔ**

| | | |
|---|---|---|
| 2. | Հոմերոս Ավետիսյան | թերապևտ |
| 3. | Սպարտակ Այվազյան | քիթ-կոկորդ-ականջ |
| 4. | Գուրգեն Դավթյան | հոգեբույժ |
| 5. | Վարդան Կարապետյան | վիրաբույժ, |
| 6. | Կարինե Թառոյան | ակնաբույժ |
| 7. | Գագիկ Վարդանյան | մաշկավեներոլոգ |
| 8. | Վիկտոր Սահակյան | սրտաբան |
| 9. | Ինգա Դարբինյան | նյարդաբան |
| 10. | Նարինե Հովեյան | բուժքույր |
| 11. | Լիլիթ Լալայան | քարտուղար |

**ՍԵՎԱՆԻ ՏԱՐԱԾՔ**

| | | |
|---|---|---|
| 2. | Թերեզա Գալստյան | թերապևտ, |
| 3. | Արսեն Մարգարյան | վիրաբույժ |
| 4. | Ալլա Հովհաննիսյան | ակնաբույժ |
| 5. | Հմայակ Ալեքսանյան | մաշկավեներոլոգ |
| 6. | Տաթևիկ Վարդանյան | սրտաբան |
| 7. | Մայրանուշ Առաքելյան | հոգեբույժ |
| 8. | Նարինե Դավթյան | նյարդաբան |
| 9. | Արկադի Առաքելյան | քիթ-կոկորդ-ականջ |
| 10. | Աստղիկ Ահարոնյան | բուժքույր |
| 11. | Օսաննա Գաբրիելյան | քարտուղար |

**ՎԱՐԴԵՆԻՍԻ ՏԱՐԱԾՔ**

| | | |
|---|---|---|
| 2. | Ռուբեն Խաչատրյան | վիրաբույժ, |
| 3. | Ռոլանդ Խաչատրյան | քիթ-կոկորդ -ականջ |
| 4. | Ժասմենա Շաբոյան | ակնաբույժ |
| 5. | Աննա Զարգարյան | նյարդաբան |
| 6. | Արամ Ալեքսանյան | հոգեբույժ |
| 7. | Անահիտ Սարգսյան | թերապևտ |
| 8. | Գեորգի Զարաֆյան | սրտաբան |
| 9. | Գագիկ Մկրտչյան | մաշկավեներոլոգ |
| 10. | Անահիտ Քալոյան | բուժքույր |
| 11. | ---------------------- | քարտուղար |

**ՃԱՄԲԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՔ**

| | | |
|---|---|---|
| 2. | Արարատ Խեչոյան | մաշկավեներոլոգ |
| 3. | Վիգեն Գրիգորյան | վիրաբույժ |
| 4. | Մարինե Խաչատրյան | թերապևտ, |
| 5. | Էլիզա Բուրչախյան | հոգեբույժ |
| 6. | Սարո Պետրոսյան | ակնաբույժ |
| 7. | Ռոզա Ավայան | քիթ-կոկորդ -ականջ |
| 8. | Գրիգոր Իսրաելյան | սրտաբան |
| 9. | Ավետիս Դանիելյան | նյարդաբան |
| 10. | Նունիկ Բայան | բուժքույր |
| 11. | Վարսիկ Սարիբեկյան | քարտուղար |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2015թ. մարտի 27 -ի
N 86-Ա որոշման

ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ, ԳՈՒՅՔԱՅԻՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ

**ԳԱՎԱՌ**

Վ. Հովհաննիսյան — Գավառի զինկոմիսարիատի 2-րդ բաժնի պետ, հանձն. նախագահ

Հ. Համբարձումյան — Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի վարիչ

Կ. Մանուկյան — Գավառի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար

**ՍԵՎԱՆ**

Հ. Մանթաշյան — Սևանի զինկոմիսարիատի 2-րդ բաժնի պետ, հանձն. նախագահ

Հ. Հակոբյան — Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության գլխավոր մասնագետ

Ա. Ղուկասյան — Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար

**ՄԱՐՏՈՒՆԻ**

Ջ. Ավետիսյան — Մարտունու զինկոմիսարիատի 2-րդ բաժնի պետ, հանձն. նախագահ

Վ. Գևորգյան — Մարտունու երկրապահ կամավորական միության նախագահ

Վ. Շառոյան — մարզպետարանի աշխատակազմի ԿՄՍ վարչության գլխավոր մասնագետ

**ՎԱՐԴԵՆԻՍ**

Ա. Վարդանյան — Վարդենիսի զինկոմիսարիատի 2-րդ բաժնի պետ, հանձն. նախագահ

Ա. Ավագյան — զինկոմիսարիատի պահեստի սպաների հաշվառման, ամրագրման, նախորոշման խմբի պետ

Ա. Հարությունյան — Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության գլխավոր մասնագետ

**ՃԱՄԲԱՐԱԿ**

Ժ. Սարգսյան — Ճամբարակի զինկոմիսարիատի 2-րդ բաժնի պետ, հանձն. նախագահ

Յու. Ավայան — Ճամբարակի քաղաքապետ

Ֆ. Սարգսյան — Ճամբարակի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԽԼՂԱԹՅԱՆ